

## ՀՈՒՆՎԱՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ



Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության հունվար ամսվա անցուդարձի մասին:

## Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից



2019-ի հունվարը լի էր նոր ծրագրերի մեկնարկով: Դրանցից մեկը «Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագիրն է, որը նպատակ ունի նպաստել Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացմանը՝ տեղական և միջազգային փորձի ջատագովության և հանրային քաղաքականությունների բարելավման միջոցով:

«Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագիրն իրականացվում է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ իրականացվող կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

## «UPSHIFT ՅԱՅԱՍՏԱՆ» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագիր



Հաջորդ նոր ծրագիրը «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման պիլոտային ծրագիրն է:

Հունվարի 30-ին ԵՆԿ ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանը, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանի Երեխաների պաշտպանության ծրագրի համակարգող Արտակ Շաքարյանը և Առողջապահության ու սնուցման ծրագրի օգնական Հասմիկ Ալեքսանյանը հանդիպում ունեցան Շիրակի մարզպետի տեղակալ Վարդան Գրիգորյանի հետ՝ «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի ներկայացման նպատակով, որը իրականացվում է ԵՆԿ ՀԿ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանի համագործակցությամբ:

«UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման պիլոտային ծրագրի նպատակն է՝ նպաստել 12-18 տարեկան դեռահասների քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ վերջիններիս ներգրավելով իրենց համայնքների կյանքի որակի բարելավմանն ուղղված գործընթացների մեջ:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց ծրագրի մանրամասները՝ կարևորելով դեռահասների նախաձեռնողականությունն ու քաղաքացիական ակտիվության բարձրացումը:

«UPSHIFT Հայաստան» ծրագիրը իր մեջ ներառում է դեռահասների զարգացման, սոցիալական նորարարության և ձեռնարկատիրության առաջատար մոտեցումների տարրեր՝ նպատակ ունենալով դեռահասների մոտ զարգացնել սոցիալական նորարարության և ձեռնարկատիրական հմտություններ:

## «Get a bike, get a life» ԱՁ



2019 թվականի նոր ծրագրերի շարքում է նաև մեր կողմից իրականացվող "Get a bike, get a life" սոցիալական ձեռնարկատիրության ծրագիրը, որի նպատակն է Գյումրիում ստեղծել և զարգացնել հեծանիվների վարձույթի համակարգ, ինչպես նաև տրամադրել զբոսաշրջային տարբեր ծառայություններ:

Մեր նպատակն է քարոզել հեծանվավարությունը Գյումրի քաղաքում և նրա շրջակայքում՝ տեղացիներին և զբոսաշրջիկներին մատչելի ծառայություններ մատուցելու միջոցով:

Ծրագիրը մի կողմից նպաստելու է անմիջական մասնակիցների՝ հատկապես երիտասարդների կյանքի որակի, շրջակա միջավայրի բարելավմանը, մյուս կողմից, նախագծից ստացված եկամուտները ծառայեցվելու են ԵՆԿ ՀԿ-ի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի գործառնությունների իրականացմանը, որոնցից օգտվում են հարյուրավոր դեռահասներ ու երիտասարդներ:

Ծրագիրն իրականացվում է ենթադրամաշնորհի շրջանակում, որը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից և իրականացվում է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ Հայաստան) և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հետ համատեղ «ԶՀ Կամուրջ» ծրագրի շրջանակներում:

## Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոն



Հունվարի 27-ին Հայաստանում «Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոնը» «Քաղաքացիական երիտասարդական կենտրոններ-2019» ծրագրի շրջանակներում «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» ՀԿ-ում անցկացրեց տեղեկատվական հանդիպում: Հանդիպմանը ներկա էին երիտասարդներ, երիտասարդական կառույցների և ՔԵԿ-երի ներկայացուցիչներ Հայաստանի տարբեր մարզերից:

Նաև տեղեկացնենք, որ ԵՆԿ ՀԿ-ն, երրորդ տարին անընդմեջ, շարունակելու է Հայաստանում Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոնի համակարգման աշխատանքները՝ ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի կողմից Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոնների գործունեության իրականացման նպատակով հայտարարված բաց մրցույթի արդյունքում:

## Եվրոպական կամավորական աշխատանք



Ուրախ ենք տեղեկացնել, որ ունենք երկարաժամկետ Եվրոպական կամավորական ծառայության հնարավորություն Լեհաստանում, որին դիմելու վերջնաժամկետը ավարտվել է հունվարի 20-ին և Եվրոպական կամավորական աշխատանքի հնարավորություն Հունգարիայում, որին ցանկացողները կարող են դիմել մինչև փետրվարի 7-ը:



ԵՆԿ-ին միացած ևս մեկ ԵԿԾ կամավոր Պիա Կայ Սիլդը Հայաստան է ժամանել Եստոնիայից և մեկ տարի շարունակ իր Եվրոպական կամավորական ծառայությունն է իրականացնելու Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ում:



## Շարժունակությունը ԵՆԿ-ի



Այս ամիս Չեխիայում և Լեհաստանում անցկացվեց ուսումնական այց «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում, որի նպատակն էր հաստատել գործընկերություն և ամրապնդել հասարակական և պետական կառույցների միջև համագործակցությունը՝ ապահովելով երիտասարդակենտրոն քաղաքականություն և երիտասարդների բարձր մասնակցություն համայնքի կյանքում:

Ուսումնական այցի մասնակից Նունե Արևշատյանը, ով Առավոտ օրաթերթի լրագրող է, իր հոդվածում անդրադարձել է Չեխիա կատարած իրենց այցին, որին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://bit.ly/2ScWUga>:

## Հունվարը «Երիտասարդների տանը»



2019թ. հունվարի 8-ից «Երիտասարդների տունը» վերսկսեց իր աշխատանքը:

Իրենց փորձաշրջանն են շարունակում «Երիտասարդական աշխատող» հաստիքի չորս փորձնակները, ովքեր տարբեր աշխատարաններ ու կրթական խաղեր են կազմակերպում պատանիների համար:

Փորձնակների մասնագիտական հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացների շարքը շարունակվում է: Այս ամիս նրանք մասնակցեցին «Էլեկտրոնային գրագիտություն» և «Ոչ ֆորմալ կրթություն» թեմաներով դասընթացների:

Կենտրոնի գործունեությանը ծանոթացնելու համար երիտասարդական աշխատողների կողմից կազմակերպվեցին տեղեկատվական հանդիպում-այցեր դպրոցներ, և այլ ուսումնական հաստատություններ:

«Երիտասարդների տանը» շարունակվում են թեմատիկ շաբաթները.

«Ստեղծագործական շաբաթվա» ընթացքում պատանիները հանդես եկան ստեղծագործ գաղափարների իրականացմամբ:

«Վիքիշաբաթվա» ընթացքում պատանիները հնարավորություն ունեցան ծանոթանալու հոդվածների խմբագրմանն ու ճանաչողական այց կազմակերպեցին Գյումրիի «Վիքիակումբ»:

Ընթացիկ երաժշտական ակումբին զուգահեռ սկսվել է «Անձի ինքնաճանաչում» ակումբը:

Ամսվա վերջին շաբաթը նվիրվեց ընկերությանն ու ընկերներին:

Երիտասարդների առօրյան հագեցած է պարբերաբար անցկացվող ֆուտբոլային առաջնություններով և կինոդիտումներով:

## Սահմաններից վեր



Ձեզ ենք ներկայացնում Հայաստան-Թուրքիա երկխոսության ծրագրերի շրջանակներում Թուրքիայից Հայաստան այցելած առողջապահության ոլորտի ներկայացուցիչների այցը լուսաբանող հոդվածն ու տեսանյութը:

Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի օգնությամբ Հայաստան այցելած Սելմա Զարան՝ Կեսարիայից, կիսվում է իր տպավորություններով: Թուրքական պարբերականում նա հրապարակել է հոդված իր այցելության և կատարած ուսումնասիրությունների մասին:

Հայաստան-Թուրքիա փորձի փոխանակման նախագծի նախկին մասնակիցներ Իռենա Գրիգորյանը և Մերի Խաչատրյանը հարցազրույց են տվել Չայխանա թերթին՝ Թուրքիայում հայ միգրանտների մասին կատարած իրենց հետազոտության վերաբերյալ:



Միրով կպատասխանենք Ձեր հարցերին և կլսենք առաջարկությունները :)